

ԿԱՐՍԻ ՎԻՃԱԿԻ ՀՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՃԵՐԱՊՈՏԱԿԱՆ ԽԵՂԵՑ

(Նորանականին)

ԺՈ. Ս. ԳՐԱՅԻՆ ԵԽԵՂԵՑ

Կաթուղիկէց գէպի արեւելք և Ս. Լուսաւորչից գէպի հիւր
սիս արեւմուտք գտնվում է Ս. Փրկիչ եկեղեցին, որ շինել է Ա.
պուղամբենց Աղվաղարիպ հայ մարզպանը 1035 թուին։ Եկեղեցին
արտաքրուստ եօթն որմնանկիւն իսկ նկրքուստ ութ. կե-
սաբոլորշի ունի։ Գեղեցիկ ինքնատիպ ճարտարապետութեամբ
շինուած եկեղեցին է։ Այս եկեղեցին նորոգել են 1173 թուին
Արծոյ երեց Տրդատ և իւր Խուշուշ կոչեցեալ կինը։

Կաթուղիկէց գէպի արեւմուտք Ախուրեանի ձորաբաշին գը-
տնվում է շինութիւնը, որ վերջը Մզկիթ է գարձրուած եղել
ինչպէս ցոյց է տալիս հիւսային արեւելեան անկիւնին կից մի-
նարեթը. բայց սկզբում, որոշ բան պէտք է եղած լինի։ Ոմանք
կաթուղիկսարան են կոչվում այդ շենքը, ոմանք էլ բարձրա-
գոյն գատարան և այլ սոյնալիսի մի հաստատութիւն։ սակայն
ինչ և լինի՝ այդ շինութիւնը հասարակական մի հաստատու-
թիւն է եղել նախ քան Մզկիթ գառնալը, և այն՝ քրիստոնէա-
կան, որովհետեւ արեւմուեան կողմը ներսի կողմից եղծուած
խաչի տեղ կայ պատի վերայ, և արեւմուեան կամարի վերայ և ս
խաչանիշներ են գուարս բերուած։ Դա դաստի ճառապահ

Ըստ իսկ՝ այդ շինութիւնը եղել է ժամատուն, տաճարը երեւի
եղել է այն տեղը, որ այժմ արեւելեան կողմը նկատվում է
իբրև քարերի մի կարկառ։ Ոմանք կարծաւմ են թէ այդ շինու-
թիւնը բնակարան է, որովհետեւ ներքնայարկ ունի, սակայն

Ներքնայարկ համարուածը ոչ այլ ինչ է եթէ ոչ մի դատարկութիւն որ գոյացել է ձորաբաշից այդ ժամատան պատը բարձրացնելիս մինչև գետնի մակերեսութիւնը հասնելը, այնուհետեւ կամար ձգուած է նոյն շինութեան յատակը պատրաստելու համար։ Թէ շինութիւնը և մինարէթը իրար հետ կապ չեն ունեցել այդ այժմ ևս յայտնի է, որովհետեւ մինարէթի նոր կցուած և շինուած լինելը թէ շինութեան քարը և թէ ձեր ցոյց են տալիս։ Մինարէթի արձանագրութիւնը Քիւթի տառերով վերաբերում է 1072 թուին։ Երեխ՝ Նետատեանց ցեղապետ Մանուչէ այս շինութիւնը Մզկիթ դարձրած լինի կամ Զաքարեանք Մզկիթը ժամատուն դարձրած, որովհետեւ ոյտ շինուած թեան հիւսիսային որմի վերայ կան թէ արաբերէն և թէ հայերէն արձանագրութեան հետքեր։

ՃԳ. Միջնաբերդ կու Ներեն բներդ Անոյ միջնաբերդ Հայութիւն

Անոյ հարաւային արեմուեան անկիւնում Ախուրեանի և Տաղկոցաձորի մինչև բարձրութեան վերայ է Անոյ միջնաբերդը որ պարիսպներով շրջապատած է եղել։ Այժմ ամբոջովին շինութեանց քարակարկառ է, շինութիւններից այժմ նկատելի են երեք եկեղեցւոյ աւերակներ, մէկը անյայտ իսկ միւսները յանուն Ա. Գեղրգայ և Ս. Սարգսի։

Բացի յիշատակեալ հիշութիւնները Անիում կան հիսութեանց դեռ ելի շատ մնացորդներ, բաղանիք, եկեղեցի և ալին ռափայն, դոքա այնքան ֆշանաւոր չեն և արձանագրութիւն չունին որպէս յայտնի լինի թէ որ ժամանակ և ովէ շինել։ Ախուրեանի ձորամակիջին կայ պարսպապատ եկեղեցի մի քանի մանրութերով։ Տաղկոցաձորի ամբողջ աջ և մասամբ ձախ ափը արհեստական ալրերով պատած է, որոնք եղել են բնուկարան խանութ, եկեղեցի, գերեզմաննոց և այնու սակայն դոքա եւս պատմութիւն չունին կամ եթէ ունին, գետաջօառղջէ եղել, նայելով Անոյ պարսպապատի փոքր արարածութեան առաջը Անոյ մասին թէ բազմամարդութեան և թէ շատ եկեղեցիներ ունենալուն հա-

մոր չէ արդարանում, տակոյն Անին միայն պարիսպներով չէ շրջափակուել, Անին տարածուած է եղել մինչև հովուի եկեղեցին և դեռև աւելի հեռի տեւելիք քան 2 վերոտ տարածութեամբ։ այժմեան թուրքի Անին որ պարսպից դուրս է և արևմրտեան կողմն է ընկնում դարձեալ հին Անւոյ մասն էր ինչպէս ցոյց են տալիս հնութեանց մնացորդները։ Այսքանով վերջացընում ենք Անւոյ մասին տեղեկութիւնները։ Անւոյ հնութիւններին հակող վանահօրեւ միաբանութեան պիտոյը լցնելու համար 190 դերիատին վարելահող և արօտատեղի է յատկացրած նոյնպէս և ծազկոցաձորի մէջ վտակի աջ ափի վերայ փոքրիկ տարածութիւն բանջարանոցի համար։

Բ.

Մ-լոս բերդ։

Անիից դեպի հարաւարագ մասում (աշայի) ունի անապահ անմատչելի ժայռի վերայ շինուած է Մաղաս բերդը։ Մաղաս բերդը ունի կրկին պարսպներ արտաքինը ցած՝ իսկ ներքինը՝ բարձր դուռը աջ կողմն է։ Երկու պարսպի մէջ ունի խրամատ իսկ նկրքին պարսպից մինչև գետը՝ անցք։ Երեք կողմից շրջապատած է Ախուրեանի անդնդախոր ձորպտոյտով։ Եերդի մէջ բաց ի այլ շինութեանց մնացորդներից՝ երեք եկեղեցիների հետոք կան։ Նատ ժամանակ չէ որ Մաղաս բերդը ամայացած է։ Սկզբում տիրում էին պարսիկները և այս՝ մինչև 1638 թիւը, ըստ ասելոյ Զաքարիա պատմագրի։ այնուհետեւ Տաճկաց ձեռքը, մինչև որ 1877 թուին ուուաները առնելով Կարսի նահանգը, տիրեցին և Մաղասի աւերակներին։ Մաղաս բերդը Անիից շատ հեռի չէ։ Հազիւ վեց վերստ հեռաւորութիւն ունենալու։ Մաղաս բերդը շինել է Մախաղ ոմն վեցերորդ դարու վերջերում։ Մօրիկ կայսեր հրամանով ուստի և շինողի անուամբ կոչուել է Մաղաս բերդ։ Առնելով արաբական տառերով արձանագրութիւններից, որ կան պարսպի վերայ կարծում են որ դա պարսկական բերդ է, ինչպէս Կովալեսկի և Մարկով

իրանց «На горахъ Арагатскихъ» отъ кѣдьми-թѣаи мѣջ յիշում
են. Սակայն բերդի միջի եկեղեցիների մասցորդները և պատ-
մութիւնը (պատմ. խաչին Հայուանեաց) և Զաքարիա սարկաւագ-
ժեւ գարում) ինչպէս յառաջ է բերում Հ. Ալիշան (Երակ.
երես 124), յայտնի ապացուցանում են որ հայ իշխանութեան
անկառմից յետոյ տիրող ազգերը, որոնք մահմետական էին,
իբրև ամուր տեղ գրաւել են և Մազաս բերդը և նորոգու-
թիւններ են արել. Մինչև գարում սկիզբը, ինչպէս պատում մ
են մերձակայ բնակիչները Մազաս բերդ, մարդաբնակ է եղել:

Աւագան (Ավագ)։

Արջոյ առիճ (Ալաջա) լեռան կողին հարաւային կողմից գտընվում է պարսկաբնակ Ալէմ՝ գիւղը. որի մէջն է Ալամանայ եկեղեցին Ս. Անանէ անունով, որ շինուած է Հերակլի թագաւորութեան 27-րդ տարիին, Երակայ և Արշարունեաց Տէր Ներսէ հիօրով 636 թուին փրկվի. շինողն է Գրիգոր Եղուատր* (Illustris) և իւր կինն Մարիամ. Նորոգութիւն արել է վանքիս վերայ Ա-շոտ ողորմածի գուտօտր և Վրաց թագաւորի կին Սոփիա թագուհին ծ-րդ գարում:

Ալամից գեղի անրելք և Անիից գեղի հիւսիս արևմուտք
մօտ վեց վերստ հեռաւորութեամբ Արջոյ առիծի հարաւային
կողմին գտնվում Բագնայր (Բանէր, Ղուզլիշա): Բագնայրի
եկեղեցին շինել է Սմբատ Մարգիստրոս որդի Վահրամ իշխա-
նի 1009 թուից յանուն Ս. Աստուածածնի: Բացի բուն տա-

(*) Οι απόδειξη της παραπάνω απόστασης στην περιοχή της Καστοριάς έγινε με βάση την παραπάνω απόσταση.

ճարն ու գաւիթը՝ մօտիկ ունի և երկու պիոքրիկ մատուռներ։ Տաճարի հարաւային կողմից եղել է սփռնազարդ սրահ։ Թէ ե՞րբ է ամսյացել այս վանքը՝ յայտնի չէ բայց մինչև ժԴ-ըդդարը առաջ առաջ նուերներ են եղել վանքին։ Յայտնի վերջին արձանագրութիւնները վերաբերում են Հայոց ԶԺԱ. և ԶԺԵ. (1266) թուականներին։ Վանքս գտնվում է Ղուղիջա թըրքաբնակ գիւղում։ և շատ խղճալի վիճակի մէջ է։

Ե.

Ղուղիջայից յետ գառնալով գեպ ի արեելք և Անւոյ հիւսիսային կողմից անցնելով, Անիից գեպ ի արեելք մօտ վեց վերստ հեռաւորութեամբ Ախուրեան գետի ափին մի թերակզնու վերայ գտնվում է Հոռոմոս կամ Ղօշավանք։ Անիից գեռ Ղօշավանք չը հասած ճանապարհի վերայ գտնվում է մի կամար երկու կողմից գմբէթարդ բարձրացած, և վանքն իւր այժմեան Ղօշական անունը ստայել է այս զոյգ գմբէթներով կամարակապից։ Աւանդութիւնն ասում է որ թագաւորների և աւագանու խորհրդանոցը Հոռոմոսի վանքումն էր. երբ թագաւորն ու աւագանին հասնում էին այս կամարակապին, Հոռոմոսի վանքին զանգակները հնչեղնում էին հանդիսաւոր ընդունելութեան համար։ Այս գմբէթարդ կամարակապը 1102 թուականից առաջ 2ինուած է եղել ինչպէս ցոյց է տալիս մի արձանագրս թիւն նոյն և Հայոց ՇՄԱ. թուականը կրող։

Այս գմբէթաւոր կամարակապից կամ ինչպէս Հ. Ալիշան անուանում է Խօշունից գեպ ի հարաւ արեելք հազիւ մի վերստաչափ հեռաւորութեամբ գտնվում է Ղօշակամ Հոռոմոսի իսկական վանքը։

Հոռոմոսի վանքը իւր բազմայարկ հոյակապ շինութիւններով ապացուցանում է որ ունիցել է փառաւոր անցեալ։ Հոյակապ շինութիւններից առաջինն է տաճարը և մածագործ գաւիթը, ուր այժմ կատարվում է աստուածային պաշտամունքը։ Հոռո-

մոսի վանքի գոյութիւնը 935—40 թությէ, Հռումոսի վանք կոչուել է Նորա համար՝ որ վանքի սկզբնական շինողներն եղել են Յունատառանից կրօնական հաջանակի պատճառով պատիստ Հայ հոգևորաթիւնները իրանց առաջնորդ Յովհաննէսի հետո, Բաց ի բուն տաճարից և գաւթից, ինչպէտ ասացին Հռումոսի վանքը նշանւոր է իւր բազմայակե հայակառ շինութիւններով։ Կոյանից նշանաւորներն են այս շինութիւնը որ այժմ նշխարատուն կամ ըստ ոմանց՝ խորհրդարան է կոչվում։ Է. նշխարատանից գէպ ի հարաւ գտնվող մի ընդարձակ շինութիւն, որ ըստ ամենայնի գաւթի նման է, սակայն տաճարը գէպ ի արեւելք չը լինելուն համար և գէպ ի տաճարը տանող դուռը ոչ միայն փակուած՝ այլ և տեղը մի քարձրաւանդակ լինելուն համար այժմ ուղղի է տալիս տարակութեան, թէ արդեօք գաւթիթ է եղել թէ մը այլ հաստատութիւն։ Այժմ՝ նշխարատան գեղեցիկ ծածքը իջած է և այս ընդարձակ շինութեան ծածքն ևս գուցե մի քանի տարուց յետոյ իշնի։ Թողնելով այլ շինութիւնները յիշենք որ ըստ տաճարի աջ և ձախ կամ հիւսիսային ու հարաւային կողմերում կան մատուռներ, որոնք քայքայուած են և շուտով կը փլչին։ Այս ինքն բուն տաճարի արեւելեան որմից, գրսի կողմից, քարերը խախտուած են և մի քանի հատ էլ վայր ընկած։ Վանքը հիւսիսային կողմից ունի սրբատաշ քարերով բարձր պարիսպ, մատուռների և տաճարի կից շինութիւնը արեւելեան կողմից գարձեալ պարսպում է լանքը, հարաւային կողմից անգընդանոր ձորն է, իսկ արեւմուեան կողմից եղել են կրկին պարիսպներ, բայց այժմ յետքն հաղիւ է նկատվում։ Վանքիս մօտն է Համանուն գիւղը հայ բնակիչներով։

Մինչև վերջին ժամանակներս Հռումոսի վանքը լինելով աթոռ Արևմտեան շիրակայ և ունենալով ընդարձակ երկրագործութիւն շէն ու պայծառ է եղել, իսկ այժմ չունենալուվ ոչ մի եկամուտ բացի մի ջրաղացի արդիւնքը և մի քանի օրավար հող գիւղացւոյ հողերի մէջ, վանահայրը հողահարկ է վճարում, վանքը շատ խեղճութեան մէջ է։ Այժմ Հռումոսի մեծախառ ուխտի միաբանութիւնը կազմուած է միայն մի վար-

դապետից, որ գիւղացւոց հոգեռոր պէտքերն է հոգում, որովհետև քահանայ չունին գիւղացիք և աղքառութեան ու սակաւամարդութեան պատճառով չեն էլ կարող քահանայ պահել; Հին արձանագրութիւններից, որ բաղմաթիւ են, վերջինը պատկանում է Հայոց ԶԼԶ. թուին: Վերջապէս իլլրե յետնագոյն արձանագրութիւն հների՝ է արձանագրութիւնը, որով Զաքարեանց տոհմից Վահրամ Պատրոնաց Պատրոն 1336 թուին նորից վերահաստատում է իւր նախնիքներից հաստատուած տուրքերը:

Հոռոմոց երկրից (Յունաստանից) փախած հայ կրօնաւորները իրանց աւազնորդ Յոլչաննէսով այս վանքը հաստատել են լինել և անցաւորաց և ճանապարհուրդաց հանդուրաց անուններու, ուր պատսպարվում էին օտարները, աղքատները և անցաւոր ճանապարհորդները, ուստի և մեծ ընդունելութիւն գտած լինելով ազգի մէջ, մեծամեծ նուշերներ ևս ստացել է սկսեալ թագաւորից մինչև յետինը ինչպէս ցոյց են տալիս արձանագրութիւնները:

Հ. Ալիշան առնելով Ասողիկից կարծում է որ Յունաստանից եկած հոգեուրականների շինած եկեղեցին որ Շողակաթ էր կոչվում, 982 թուին այրեց պարսից ամիրա Ալլիշան գիլմաստիկ, թելատրութեամբ կարսի թագաւոր Մուշեղի՝ որ կամենում էր իւր եղբայր և Անւոյ թագաւոր Սմբատ Բ.-ից վրեժ առնել: Այժմեան տաճարը վերագրվում է Յոլչաննէս թագաւորին (1038 թուին), ինչպէս ցոյց է տալիս արձանագրութիւնը:

Անւոյ աւերմաննքից յետոյ ինչպէս երեսում է այս վանքն էլ ամայացել կամ անշքացել է մինչև Հայոց ՌՃՂԴ կամ Փրկչի 1685 թուականը, երբ Տիգրանակերտցի Դանիէլ վարդապետը տեղւոյն Խաթուն օղլու Մաւստափա աղայի իշխանութեան օրով նորոգում է:

Հոռոմասի վանքը գտնվում է Ճորաբաշին մի հրուանդանի վերայ, իսկ Ճորի մէջ, Հոռոմասի վանքից գէպ ի հիւսիս արևելք $\frac{1}{2}$ վերստ հեռաւորութեամբ գտնվում են երկու մատուռներ, Ս. Գէորգ և Ս. Մինաս անուամբ, երեխ, Բագրատունի թագաւորների հանգստարան եղած, որովհետև Ս. Գէորգ մատուքի հարաւային կողմը գտնվում է օրօրօցած մեծադիր մի գերեզ-

ման որ ժամանակին արևելիան կողմից ունեցել է մեծ խաչքար ինչպէս սովորութիւն էր առհսոսարակ այժմ խաչքարը չը կայ բայց պատուանդանը դեռ կայ: Գերեզմանի վերայ կոպիտ փուրագրութեամբ կայ մի վերտառութիւն որից երեսում է որ Աշոտ թագաւորի գերեզմանն է: Ս. Դէորդ հկեղեցին շինել է Գագիկառաջինինչպէս գրումէ Հ. Ալիշան Փ. բգդամրուսկզբում: Ա. Մինաս եկեղեցին աւելի հին է քան 986 թուականը որովհետեւ այդ թուակին ընծայաբերութիւն է լինում եկեղեցուն արդէն որպէս շինուածի:

(Ծորուակէ) ՅՈՒՍԻԿ ՎԱՐԴԱՊԵՏ ՄՈՎՍԵՍՆ:

ԱԶԳԱՅԻՆ

Ի ԶԳՈՒՇՈՒԹԻՒՆ

Յայտնութեան կրօնը տատուածային շնորհք է մարդկութեան տուած, որպէսզի առ կրօնով գատարակալուելով և նորանով զեկալարուելով երջանիկ լինի թէ այս անցաւոր աշխարհում և թէ ապագայ յաւիտենական կետնքի համար իւր պատրաստութիւնը տեսած լինի, որ մարդուս կեանքի նպատակն և նորա ամենամեծ երջանիկութիւնն է: Կրօնի այն նշանակութիւնը միշտ ճանաչուած է եղել և է. որովհետեւ ուր մարդիկ կրօնական դաստիարակութեամբ զարգացած են միշտ երջանիկ եղած են մինչեւ իսկ աշխարհիս ծանր բերմունքների և հանգամանաց մէջ. վասնզի կրօնը մարդուս հոգին և դորա ամեն կարողութիւնքը կազդուրողն և նրանց համաձայն Աստուծոյ կամաց ի բարին ուղղողն է. կրօնը մարդուս Աստուծոյ հետ սերառութեամբ կապողն է, կրօնը մարդուս իւր մերձաւորին եղբայր ճանաչեցնողն է, կրօնը թշողութեանց մէջ մարդուս ամբարտաւանութիւնն և անձնասպանութիւնը զոպողն է, կրօնը մարդուս բարքն ամո-